

ՄԱՅԱԴ ԲԱԴԱԼՅԱՆ

ԵՊՀ-ի իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող



ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՅՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում վարչական մարմինների գործունեությունը կանոնակարգող օրենսդրական ու ենթօրենսդրական տասնյակ ակտերը շատ դեպքերում հակասում են միմյանց և պատշաճ երաշխիքներ չեն ապահովում ֆիզիկական և իրավաբանական անձանց համար վարչական մարմինների հետ հարաբերություններում: Ստեղծված իրավիճակից ելքն անհնար էր առանց վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև ծագող հարաբերությունները կարգավորող մեկ միասնական, համակարգված իրավական ակտ ունենալու¹: Այդ խնդրի լուծմանն էր ուղղված 2004թ. փետրվարի 18-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որն ուժի մեջ մտավ 2004թ. դեկտեմբերի 31-ին: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդունման գլխավոր նպատակներից մեկն է մեկ միասնական ակտի միջոցով կանոնակարգել վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև ծագող հարաբերությունները, սահմանել այն հիմնական չափանիշները, սկզբունքները և ընդհանուր պահանջները, որոնցով պետք է ղեկավարվեն վարչական մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև՝ որոնց հիման վրա պետք է ընդունվեն և կիրառվեն առանձին տեսակի վարչական վարույթների վերաբերյալ ընդունվող իրավական ակտերը՝ վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց հարաբերությունների առանձին

ուղորտների առանձնահատկությունների հաշվառմամբ: Եթե «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ընդունված առանձին տեսակի վարչական վարույթների կարգավորմանն ուղղված ՀՀ օրենքները հիմնականում համապատասխանում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին², ապա նույնը չի կարելի ասել մինչև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը ընդունված ՀՀ օրենքների վերաբերյալ, որոնք կարգավորում են վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև ծագող հարաբերությունները: Խոսքն առաջին հերթին վերաբերում է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքին, որն ընդունվել է 2000թ. մայիսի 17-ին:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսվարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պա-

հանջներին: Հանրային իրավունքի բնագավառում իրականացվող այս գործունեության պատշաճ իրավական կարգավորումից է մեծապես կախված այս ոլորտում վարչարարության իրականացման արդյունավետությունը, անձանց իրավունքների իրականացման ապահովումը, և միայն այդ դեպքում հնարավոր կլինի իրապես հասնել ստուգման նպատակների իրականացմանը, որոնք են՝ տրնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ հրապարակված հաշվետվությունների արժանահավատությունը պարզելը, Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելը և տնտեսավարող սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, ստուգումների իրականացման ընթացքում նշված օրենքի կիրառելիության հարցը միանշանակ չէր ընդունվում իրավակիրառական պրակտիկայում: Շատ հաճախ, հատկապես ստուգումն իրականացնող մարմինների ներկայացուցիչների կողմից հնչեցվում էր կարծիք, որ ստուգումներն ամբողջովին իրավական կարգավորման են ենթարկվում միայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը այստեղ կիրառելի չէ: Նման պարագայում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ստուգումների իրավական կարգավորման բնագավառում այս երկու օրենքների հարաբերակցության հարցը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Այս

հոդվածից բխում է, որ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանվում են այս ոլորտում վարչական վարույթի առանձնահատկությունները, իսկ բոլոր այն դեպքերում, երբ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ այլ կարգավորում, պետք է կիրառվի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը: Այդ մասին է նշել նաև ՀՀ վրձնաբեկ դատարանը 06.07.2007թ. թիվ 3-918(ՎԳ) քաղ. գործով կայացված որոշմամբ³: Վերոհիշյալ որոշմամբ վրձնաբեկ դատարանն արձանագրել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով կարգավորվում է ստուգումների իրականացման բնագավառում վարչական վարույթի իրականացման կարգը և առանձնահատկությունները, իսկ նման առանձնահատուկ կարգավորման բացակայության պայմաններում գործում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման պատշաճ իրավական կարգավորման տեսանկյունից առանձնակի հետաքրքրություն և կարևորություն է ներկայացնում այն հարցը, թե ստուգումների ընթացքում վարչական վարույթը երբ է համարվում հարուցված: Այսպես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է վարչական վարույթի հարուցման երկու հիմք՝ անձի դիմումը (բողոքը) և վարչական մարմնի նախաձեռնությունը: Ստուգումը, որպես կանոն, իրականացվում է վարչական մարմնի նախաձեռնությամբ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում

է, որ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը: «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) ստուգում իրականացնելու մասին հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր: Առաջին հայացքից կարող է թվալ, որ հենց «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ հոդվածով նախատեսված հրամանի կամ հանձնարարագրի հրապարակմամբ էլ վարչական վարույթը համարվում է հարուցված, սակայն, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքների առավել մանրակրկիտ վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ հրամանի կամ հանձնարարագրի հրապարակմամբ վարչական վարույթ չի հարուցվում: Այսպես՝ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ստուգման արդյունքներով կազմվում է ակտ երկու օրինակից, եթե տնտեսվարող սուբյեկտն ունի պետական բաժնեմաս՝ երեք օրինակից, խախտումներ և թերություններ չհայտնաբերելու դեպքում կազմվում է տեղեկանք: Այսպիսով, ստուգման արդյունքներով կարող է կազմվել երկու տեսակի փաստաթուղթ. խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ ակտ, խախտումներ չհայտնաբերելու դեպքում՝ տեղեկանք: Պատասխանելու համար այն հարցին, թե ստուգումը, որպես վարչական վարույթ, երբ է համարվում հարուցված, անհրաժեշտ է պարզել ստուգման արդյունքում կազմվող այս երկու փաստաթղթերի իրավական բնույթը, մասնավորապես՝ արդյո՞ք վերջիններս հանդիսանում են վարչական ակտ, քանի որ, ինչպես նշվեց վերևում, վարչա-

կան վարույթը վարչական մարմնի կողմից վարչական ակտի ընդունմանն ուղղված գործունեությունն է: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմնին ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Այստեղից հետևում է, որ ստուգման արդյունքներով կազմվող ակտը միանշանակորեն հանդիսանում է վարչական ակտ, քանի որ համապատասխանում է վարչական ակտի չափանիշներին, այն է՝ ունի արտաքին ներգործություն, հանրային իրավունքի բնագավառում հետապնդում է կոնկրետ գործի կարգավորման նպատակ և, որն ամենակարևորն է, ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Ինչ վերաբերում է ստուգման արդյունքներով կազմվող տեղեկանքին, ապա ակնհայտ է, որ այն չի հանդիսանում վարչական ակտ, քանի որ չունի վարչական ակտի վերոհիշյալ հատկանիշները, մասնավորապես՝ անձանց համար չի սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում իրավունքներ կամ պարտականություններ: Տեղեկանքը հանդիսանում է ընդամենը տեղեկատվական բնույթի փաստաթուղթ⁴:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարի կողմից ստուգումն իրականացնելու մասին հրամանի կամ հանձնարարագրի հրապարակմամբ վարչական վարույթ չի հարուցվում այն պատճառաբանությամբ, որ այդ պահին ստուգումն իրականացնող մարմնի գործողությունները չեն կարող նպատակամղված լինել վարչական ակտի ընդունմանը, քանի որ հայտնի չէ, թե

արդյոք կհայտնաբերվի որևէ խախտում, և կընդունվի արդյոք վարչական ակտ: Հնարավոր է, որ խախտում չհայտնաբերվի և կազմվի տեղեկանք, որը, ինչպես նշվեց վերևում, չի հանդիսանում վարչական ակտ: Փաստորեն, նման պարագայում ստուգումն ուղղված չէ վարչական ակտի ընդունմանը և, հետևաբար, վարչական վարույթ այս դեպքում չի հարուցվում, քանի որ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

Ստուգումների կազմակերպման և անցկացման շրջանակներում վարչական վարույթ կարող է հարուցվել միայն խախտումներ հայտնաբերվելու դեպքում և այս դեպքում վարչական վարույթը հարուցվում է ստուգման արդյունքներով ակտի կազմմամբ, քանի որ ստուգումն իրականացնող մարմնի առաջին գործողությունը, որն ուղղված է վարչական ակտի ընդունմանը, դա ակտի կազմումն է: Ընդ որում, այդ ակտն էլ հենց հանդիսանում է վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտ: Այլ կերպ ասած՝ վարչական վարույթի հարուցումը և վարչական ակտի ընդունումը կատարվում է միաժամանակ, այնինչ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված են որոշակի և հստակ ընթացակարգեր վարույթի հարուցումից մինչև վարչական ակտի ընդունումն ընկած ժամանակահատվածում, մասնավորապես, վարչական վարույթը պետք է բաղկացած լինի միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից: Մինչդեռ, ստուգման ակտով հարուցելով վարչական վարույթը և միաժամանակ ստուգման ակտով էլ եզրափակելով այն, վարչական վարույթի ընթացիկ փուլ չի իրականացվում, ինչի հետևանքով վարչական վարույթի մասնակիցները զրկվում են վարչական վարույթի՝ այդ փուլում օրենքով իրենց վերապահված իրավունքներն

իրականացնելու հնարավորությունից: Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ, վարչական վարույթի մասնակիցները, վարչական մարմնի գործունեության հրապարակայնությունը և վարչական վարույթի իրականացման ժամանակ այդ մարմնի անաչառությունն ապահովելու նպատակով, իրավունք ունեն վարույթն իրականացնող մարմնում ծանոթանալու վարչական վարույթի նյութերին, վարույթի մասնակիցները վարչական վարույթի նյութերից կարող են կատարել պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ, վարչական մարմինը պարտավոր է անձանց համար պայմաններ ստեղծել իր ընդունած նորմատիվ իրավական ակտերին, ինչպես նաև այդ մարմնի գործունեությանն առնչվող օրենքներին և իրավական այլ ակտերին ծանոթանալու համար: Վարչական վարույթի ընթացիկ փուլի բացակայության պայմաններում վարչական վարույթի մասնակիցները, փաստորեն, զրկվում են օրենքով իրենց վերապահված վերոհիշյալ և մի շարք այլ իրավունքներն իրականացնելու հնարավորությունից, ինչը կարող է հանգեցնել չիիմնավորված և անօրինական վարչական ակտի ընդունմանը, քանի որ գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում տեղի չի ունենում:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ վերոգրյալ հիմնախնդրի ևս մեկ մասնավոր դրսևորման: Այսպես՝ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ իր լիազորությունների շրջանակներում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ է օժտված նաև ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայությունը (ներկայիս՝ ՀՀ ԿԱ պետական եկա-

մուտների կոմիտե): «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հարկային վարչարարության իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հարկային մարմնում գործում է հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդ (այսուհետ՝ ֆոնդ): Ֆոնդը, ի թիվս այլ աղբյուրների, կազմավորվում է նաև հարկային մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված հարկերը, տուրքերը, պարտադիր այլ վճարները, հարկվող շրջանառությունները և եկամուտները թաքցնելը կամ պակաս ցույց տալը բացահայտելու հետևանքով պետական բյուջե լրացուցիչ գանձվող հարկերից, տուրքերից, պարտադիր այլ վճարներից և դրանց հետ կապված հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական պատժամիջոցներից, ինչպես նաև հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին օրենսդրությամբ նախատեսված տուգանքներից տասը տոկոս մասհանումների հաշվին: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ֆոնդին տրամադրվում է նաև լրացուցիչ գումարներ անմիջապես հայտնաբերողների դրամական պարգևատրման և օգնության համար: Այստեղից բխում է, որ հարկային մարմնի՝ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք յուրաքանչյուր դեպքում շահագրգռված են հարկեր, տուրքեր, պարտադիր այլ վճարներ, հարկվող շրջանառություններ և եկամուտներ թաքցնելու կամ պակաս ցույց տալու իրական և ոչ իրական դեպքեր բացահայտելու և դրա արդյունքում միջամտող վարչական ակտ ընդունելու հարցում, այսինքն՝ վերջիններս շահագրգռվածություն ունեն վարչապետի ելքով, քանի որ դրա հետևանքով պետական բյուջե գանձվող լրացուցիչ գումարներից տասը տոկոս մասհանումների հաշվին ստանում են դրամական պարգևատրություն: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարչական վարույթի

մասնակիցները կարող են գրավոր բացարկ հայտնել վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձին, իսկ օրենքով նախատեսված դեպքերում կոլեգիալ կազմով վարչական վարույթ իրականացնելիս՝ կոլեգիալ կազմի ցանկացած անդամի, եթե առկա են հանգամանքներ, որոնք վկայում են գործի ելքով տրվելու պաշտոնատար անձի կամ կոլեգիալ կազմի անդամի ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգռված լինելու մասին կամ կասկած են հարուցում տվյալ գործի առնչությամբ նրա անաչառության նկատմամբ: Փաստորեն, հարկային օրենսդրության խախտումներ անմիջապես հայտնաբերողներին օժտելով վարչական վարույթը եզրափակելու և վարչական ակտ ընդունելու իրավասությամբ, օրենքը հնարավորություն է տալիս ցանկացած դեպքում բացարկ հայտնել ստուգումն իրականացնող ցանկացած պաշտոնատար անձի, քանի որ, ինչպես նշվեց վերևում, օրենսդրության խախտումներ անմիջապես հայտնաբերողներն ուղղակիորեն շահագրգռված են վարչական վարույթի ելքով:

Մեր խորին համոզմամբ, վերոհիշյալ հիմնախնդիրների ամենաճիշտ և արդյունավետ լուծումը հետևյալն է. անմիջապես ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք չպետք է օժտված լինեն վարչական վարույթը եզրափակելու և վարչական ակտ ընդունելու իրավասությամբ: Վերջիններս պետք է օժտված լինեն միայն խախտումը արձանագրելու իրավասությամբ, և հայտնաբերված խախտման վերաբերյալ նրանց կողմից արձանագրության կազմմամբ էլ վարչական վարույթը կհամարվի հարուցված: Դրանից հետո վարչական վարույթի մյուս երկու փուլերը՝ ընթացիկ և եզրափակիչ, պետք է իրականացվեն համապատասխան վարչական մարմնի այլ պաշտոնատար անձանց կամ կոլեգիալ մարմնի կողմից, որը, քննելով գործը, կընդունի վերջնական որոշում: Այդ դեպքում արդեն կլինի հրատակ տարանջատում վարչական վարույթի բոլոր փուլերի միջև, վարչական վարույթի մասնակիցներին հնարավորություն կընձեռնվի

լրիվ ծավալով իրականացնել օրենքով իրենց վերապահված իրավունքները, ինչն էլ, իր հերթին, մեծապես կնպաստի գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկմանը և օրինական ու հիմնավորված վարչական ակտի ընդունմանը:

Օգտագործված գրականություն և իրավական ակտեր

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի, հունվար - դեկտեմբեր 2007, Հատոր 2, «Շիրակա Գուտ» ՍՊԸ, Երևան 2008:

Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ, Հարդ ընդ Սովթ հրատարակչություն, Երևան, 2007:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2004/18 (317), 31.03.04թ.:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2000/14 (112), 23.06.00թ.:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2002/33 (208), 14.08.02թ.:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2005/28(400), 18.05.05թ.:

¹ Տե՛ս Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ, Հարդ ընդ Սովթ հրատարակչություն, Երևան, 2007, էջ 7:

² Տե՛ս «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը, ՀՀՊՏ 2005/28(400), 18.05.05:

³ Տե՛ս ՀՀՊՏ 2007/37 (561), 25.07.07.:

⁴ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007թ. թիվ 3-1739 (ՏԳ) քաղ. գործով կայացված որոշումը՝ ըստ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ դիմումի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության՝ Ծառայության խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության թիվ 1018973 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին ՀՀՊՏ 2007/66.1, 26.12.07.: